Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հոկտեմբերի 9-ի N 1426 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԽԱՂՈՂԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է 2025 թվականին խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարողներին գյուղատնտեսական հումքի մթերումների (այսուհետ՝ գնումների) նպատակով տրամադրվող վարկերի շրջանակներում բյուջետային երաշխիքների տրամադրման ընթացակարգը:

2. Սույն կարգի իմաստով օգտագործվող հասկացությունները և հապավումները՝

1) ծրագիր՝ գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի շրջանակներում բյուջետային երաշխիքների տրամադրում.

2) շահառու՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող, 2025 թվականին խաղողի գնումներ իրականացնող և 2024 թվականին արտահանումներ իրականացրած իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն ունի դրական վարկային (վարկի համար դիմելու պահին նախորդող 12 ամիսների ընթացքում շահառուն և (կամ) իր հետ փոխկապակցված որևէ անձ չպետք է ունենա 90 օր և ավելի ժամկետով ժամկետանց վարկային պարտավորություն կամ «ոչ ստանդարտ» դասով դասակարգված վարկեր) պատմություն և դիմումի ներկայացման նախորդող օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ (առանց դրոշմանիշային վճարի).

3) ԳՖԿ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույց.

4) ՖԿ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկեր կամ վարկային կազմակերպություններ, որոնք գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով վարկերի տրամադրման համար սահմանված ընթացակարգով ԳՖԿ-ի հետ կնքել են պայմանագրեր.

5) բյուջետային երաշխիք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում խաղողի գնումների նպատակով տրամադրվող վարկերի համար ՖԿ-ներից վարկային միջոցներ ներգրավելու նպատակով տրամադրվող վարկի հիմնական գումարի վերադարձի ապահովման միջոց:

3. Սույն կարգի հիման վրա բյուջետային երաշխիքներն առանց ապահովման միջոցի կարող են տրամադրվել խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարողներին՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը տրամադրվող վարկերի համար՝ շահառուի կողմից իրականացված վարկի հիմնական գումարի մարումներն առաջնային կարգով բյուջետային երաշխիքներով ապահովված պարտավորությունների մարմանն ուղղելու պայմանով, առավելագույնը մինչև քսանյոթ ամիս մարման ժամկետով:

4. Տրամադրվող բյուջետային երաշխիքի գումարը չպետք է գերազանցի Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում ՖԿ-ի կողմից տրամադրվող վարկի գումարի 50%-ը, բայց ոչ ավելի, քան 2024 թվականին արտահանված արտադրանքի արժեքի չափը: Ընդ որում, տրամադրվող բյուջետային երաշխիքի գումարի նվազագույն չափը կազմում է 100.0 մլն դրամ:

5. Բյուջետային երաշխիքով ապահովված վարկի գծով կնքված պայմանագրի կրկնօրինակը և մարման ժամանակացույցը հաստատումից հետո ՖԿ-ն եռօրյա

ժամկետում ներկայացնում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և ԳՖԿ-ին:

6. Բյուջետային երաշխիքով ապահովված վարկի հիմնական գումարի ամբողջական մարումից հետո եռօրյա ժամկետում ՖԿ-ն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանն է վերադարձնում բյուջետային երաշխիքի բնօրինակը, ինչի վերաբերյալ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

7. Ծրագրի ավարտի վերջում տրամադրված բյուջետային երաշխիքի դիմաց որպես վճար շահառուի կողմից վճարվում է միջնորդավճար՝ երաշխիքային գումարի 1 տոկոսի չափով:

8. Այն դեպքում, երբ 2025 թվականին տրամադրվող բյուջետային երաշխիքի շրջանակներում շահառուի կողմից ստանձնած վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում ՖԿ-ի կողմից գրավադրված գույքի նկատմամբ իրականացվում է իրացման գործողություն, ապա գույքի իրացման արդյունքում առաջացող գումարն ուղղվում է ՖԿ-ի կողմից հատկացված վարկի գծով պարտավորությունների մարմանը, այդ թվում՝ վարկի բյուջետային երաշխիքով ապահովված մասի մարմանը:

2. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

9. Շահառուները վարկավորման նպատակով Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով սահմանված ընթացակարգով դիմում են ՖԿ-ին:

10. ՖԿ-ն իրականացնում է շահառուների վարկունակության գնահատում և կայացնում նախնական որոշում՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի ներքո վարկ տրամադրելու վերաբերյալ (վարկի նախահաստատում):

11. Եթե շահառուի կողմից հայցվող վարկի գումարը գերազանցում է վերջինիս կողմից առաջարկվող գրավի առարկայի կամ բանկային երաշխիքի դիմաց ՖԿ-ի կողմից տրամադրվող վարկի գումարին, ապա շահառուն հայցվող վարկի գումարի

չբավարարող մասի համար բյուջետային երաշխիք ստանալու նպատակով կարող է դիմել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը՝ համաձայն N 1 ձևի:

12. Դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) տեղեկանք ՖԿ-ից՝ վարկի չապահովված մասի և վարկի ապահովման միջոցի գնահատված շուկայական արժեքի վերաբերյալ.

2) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանք՝ 2024 թվականին արտահանված արտադրանքի տեսականու, ծավալների և ընդհանուր արժեքի մասին.

3) հարկային մարմնի տեղեկատվական համակարգում առկա տվյալներին համապատասխան ներբեռնված և արտատպված հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը՝ դիմումի ներկայացման օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ.

4) ԱՔՌԱ վարկային բյուրոյից տեղեկություն՝ վարկային պատմության վերաբերյալ.

5) տեղեկություն՝ նախորդ երկու տարվա տնտեսական գործունեության մասին՝ համաձայն N 2 ձևի.

6) տեղեկություն շահառուից՝

ա. «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի համաձայն իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց անվանումների մասին,

բ. երաշխիքի ստացման համար դիմելու օրվա դրությամբ շահառուի ակտիվների չափի մասին,

գ. 2023 և 2024 թվականներին ներգրավված բյուջետային երաշխիքով ապահովված վարկի չափի, վարկի տրամադրման ամսաթվի և վարկային պայմանագրի համարի մասին:

13. Եթե ներկայացված դիմումը թերի է կամ սույն կարգի 12-րդ կետում նշված փաստաթղթերն ամբողջական չեն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի

նախարարությունը երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է դիմումատուին՝ թերությունները և անհամապատասխանությունները վերացնելու և նոր դիմում ներկայացնելու մասին: Դիմումատուն պարտավոր է սույն կետով նախատեսված կարգով տեղեկացումն ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սույն կարգի պահանջներին համապատասխան նոր դիմում:

14. Սույն կարգի պահանջներին համապատասխան դիմումն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը ԳՖԿ-ի հետ համատեղ 3 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է այն և

1) ոչ հիմնավոր ճանաչելու դեպքում գրությամբ պատասխանում է դիմումատուին՝ նշելով դիմումի մերժման պատճառները.

2) հիմնավոր ճանաչելու դեպքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը շահառուին բյուջետային երաշխիք տրամադրելու մասին իր առաջարկություններով միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ կցելով շահառուի կողմից ներկայացված փաստաթղթերը և դրա մասին գրությամբ տեղեկացնում է դիմումատուին:

15. Դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերում առկա են ոչ հավաստի տվյալներ.

2) շահառուն չունի սույն կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրական վարկային պատմություն կամ ունի ժամկետանց հարկային պարտավորություն.

3) պահանջվող բյուջետային երաշխիքի գումարի չափը գերազանցում է ՖԿ-ի կողմից տրամադրվող վարկի գումարի 50%-ը կամ 2024 թվականին արտահանված արտադրանքի արժեքի չափը.

4) շահառուի ու «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի համաձայն իր հետ փոխկապակցված իրավաբանական անձանց 2022, 2023, 2024 թվականներին տրամադրված և 2025 թվականին տրամադրվող բյուջետային երաշխիքների ընդհանուր գումարը գերազանցում է 5.0 մլրդ դրամը.

5) դիմումատուի կողմից սույն կարգի 13-րդ կետով նախատեսված ժամկետում սույն կարգի պահանջներին համապատասխան նոր դիմում չներկայացնելու դեպքում:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

16. Շահառուի կողմից հայցվող վարկի գծով ՖԿ-ի կողմից տրամադրվող վարկի գումարը չբավարարող մասի համար բյուջետային երաշխիք տրամադրելու մասին միջնորդությունն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը 3 աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է այն և

1) միջնորդությունը ոչ հիմնավոր ճանաչելու դեպքում այն գրությամբ վերադարձնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը՝ նշելով միջնորդությունը մերժելու պատճառները.

2) միջնորդությունը հիմնավոր ճանաչելու դեպքում՝ 3-օրյա ժամկետում շահառուի հետ կնքում է բյուջետային երաշխիքի տրամադրման մասին պայմանագիր և վերջինիս տրամադրում թողարկված բյուջետային երաշխիքի բնօրինակը՝ դրա մասին ծանուցելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

17. Անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կարող է պահանջել լրացուցիչ տեղեկություն շահառուից՝ առկա վարկային պարտավորությունների կառուցվածքի վերաբերյալ:

18. Միջնորդությունը մերժվում է, եթե սույն կարգի 12-րդ կետում նշված փաստաթղթերն ամբողջական չեն կամ դրանցում նշված տվյալները չեն համապատասխանում սույն կարգով նախատեսված պահանջներին:

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

…….....…… ....-ԻՑ
(նշել իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, ՀՎՀՀ-ն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն)

Դ Ի Մ ՈՒ Մ

ԳՐԱՎԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՉԲԱՎԱՐԱՐՈՂ ՄԱՍԻ ՉԱՓՈՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խնդրում եմ .....…….-ին
(նշել իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը)

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում

.....-ից ..... (.....) դրամ
(նշել ֆինանսական կառույցի անվանումը) (նշել գումարի չափը թվերով) (նշել գումարի չափը տառերով)

վարկի ներգրավման նպատակով գրավի ապահովման չբավարարող .....(.....) դրամի չափով տրամադրել բյուջետային երաշխիք:
(նշել գումարի չափը թվերով) (նշել գումարի չափը տառերով)

Առդիր .... էջ:

Ստորագրող

..... …….....
(պաշտոնը) (անունը, ազգանունը)

.....
(ստորագրությունը)

.... 2025 թ.

Ձև N 2

Տեղեկություն .... տնտեսական գործունեության մասին
(նշել իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը)

NN ը/կ	1	2	3
	Ցուցանիշը	2023 թվական	2024 թվական
1.	Արտադրանք (մլն դրամ)		
2.	Իրացում (մլն դրամ)		
3.	Արտահանում (մլն դրամ)		
4.	Արտահանման երկրներ		
5.	ԱԱՀ		
6.	Շահութահարկ		
7.	Եկամտային հարկ		
8.	Այլ հարկեր և տուրքեր		

Ստորագրող

..... …….....
(պաշտոնը) (անունը, ազգանունը)

.....
(ստորագրությունը)

.... 2025 թ.

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

10.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ